


ՊԱՅՄԱՆՔ

Հարկերի գին և Պարտքերի 8 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 10 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 4 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 3 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 2 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 1 ՄԶԸ.



ԼՐԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆՔ

Հարկերի գին և Պարտքերի 8 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 10 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 4 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 3 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 2 ՄԶԸ.
Հարկերի գին և Պարտքերի 1 ՄԶԸ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 16 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քանի մ'որէ ի վեր Եւրոպայէն եկած հեռագրական լուրերը խաղաղութեան պահպանութեան և տէրութեան խորհրդոյ բացման վրայ մեծ յոյսեր կուտան։ Եւրոպայի կոմսը լոնտրոն հասնելով Լորտ Սալիսբորիի հետ տեսակցած և իւր տէրութեան կողմէն տարած առաջարկութիւններն հաղորդած էր։ Բայց մինչև հիմայ բանակցութիւնները գաղտնի կը պահուին, և լրագրաց տուած ծանօթութիւնները մասնաւոր աղբերկ կամ կարծեաց վրայ հաստատուած են։ Զգիտցուի ճշդութեան ճշգրտութիւններն ինչ էին, և ինչ պատասխան ստացաւ անտիք։ Ռուս լրագրից կրտսեր թէ Եւրոպայի կոմսը ինչքան զբաւուր առաջարկութիւններն չբերաւ, այլ բերանայի կերպիւ թաղուհոյն նախարարաց կարծիքն իւր տէրութեան պիտի հաղորդէր։ Բողոնք կան նաև թէ կոմսը տեսնելով որ երկու տէրութեանց յարաբերութիւնները վտանգի մէջ են, խնդրեց որ Բեդֆորդի իր թաղի, և Անգլիոյ դիւանայի ու պահանջմանց վրայ բացատրութիւն տայ, յուսալով որ այն ատեն կը յաջորդէ Զարն համոզելու որ զիջումներ ընէ։ Եւրոպայի կոմսը խաղաղութեան ու չափաւորութեան կուսակցի կը համարուի։ Ռուսի և հաւանականաբար չէր կրնար Այսթֆանտի գաղտնագրութեան ծայրայեղ կէտերը չտեսնել, և այս մասին Անգլիոյ դիւանայութեանց իրաւացի կողմերն Ալեքսանդր Բ. կայսեր բացատրելով պիտի յաջողէր երկու տէրութեանց մէջ խաղաղութիւնը պահպանել։

Ինչ էին Անգլիոյ պահանջումները։ Գլխաւորապէս կը սուր թէ Անգլիա նոր Պուլաւիոյ սահմանաց ընդարձակութեան և Պաթմի առանցքէ մ'առաջարկութիւններ կը հանէր։ Լորտ Սալիսբորի իւր շրջաբերականին մէջ կը գրէր. «Գաղտնագրութեան գործնականապէս ունենալը ամենապարտաւոր հետեանքն անոնք են որքան որ գործադրութեան պիտի ծագին ամբողջապէս Արևելեան Եւրոպայի աղբաց վրայ։ Նոր Պուլաւիոյ հաստատող յոգնածոյ տըրաւագրութեանց համեմատ՝ զօրաւոր Սլավ պետութիւն մը պիտի կազմուի Ռուսիոյ պաշտպանութեան ու հսկողութեան ներքեւ, կարեւոր նաւահանգիստներ ունենալով Սև ծովու և Արշակունիքի եզերքն, և յիշեալ տէրութեան գերիշխան աղբացութիւն մը տալով այն երկու ծովերուն քաղաքական և վտանգականա-

կան աղբացութեանց վրայ։»

Արդարեւ Պուլաւիոյ սահմաններն այնչափ ընդարձակ բռնուած էին, որքան կրնային համապատասխան կուսակցութիւնը գտնել, բայց միւս տէրութեանց և աղբաց շահերուն բոլորովին անհաշիւ էին։ Եզեական ծովուն եզերքը՝ Գալիսիայէն սկսեալ՝ Ալբանիոյ մոտէն անցնելով մինչև Սև ծովու եզերքը Պուլաւիոյ սահմանը կը տարածուէր, իրեն մէջ ըմբռնելով բազմաթիւ գաւառներ ուր Պուլաւիոյ տէրութիւնը խիստ նուազ է և մեծամասնութիւնն Յոյն և իսլամ։ Այս կերպիւ յամաբէն Բ. Դարն հաղորդակցութիւնները կը կտրուէին իւր Որեմոնեան գաւառաց հետ։ Սեւ ծովի փոքր թերակղզի մը կը մնար։ Ալպանիոյ գլխաւոր նաւահանգիստն ինքի վրայ՝ Գարատաղի տրուելով ոչ միայն ցամաքէն այլ և ծովէն անգամ հաղորդակցութիւնները գտնուողացած են։ Պոսնա և Հէրսէ Գուլարիոյ մէջէն զինուորական ճանապարհ մը միայն պիտի ունենային։ Բայց գաղտնագրութեան ամենէն վտանգաւոր կողմն էր Յոյներն և իսլամները Պուլաւիոյ երկրակէտ, և ոչ միայն ապագային՝ այլ այժմէն մեծ շփոթութեանց և ապստամբութեանց սեղիք տալ։ Որով խնդիրը փոխանակ լուծուելու, ինչպէս կը կարծէր իսկ նախկին զօրավարն, յաւերժական շփոթութեանց պատճառ կը լլար։ Արդէն ծանուցած ենք թէ ֆիլիպիի Յոյնը մեծ տէրութեանց բողոքեցին իրենց Պուլաւիոյ մասին գէտ հեռագրի ինքնաբերական կարեւոր յաջողութիւններն ձեռք բերելով։

Կորաբողի իշխանին ապրիլ 9 յիշատակագիրը կը թէ Պուլաւիոյ սահմաններն ընդհանուր կերպիւ գրծուած են։ Ընդունուած սկզբունքն է ժողովրդեան մեծամասնութիւնն, յորմէ աւելի իրաւացի միջոց մը խորհիլ անկարելի է։ Բայց այս սկզբունքը որոշութեան խառն յանձնաժողովի մը վերապահուած է, որոյ տեղակալ քննութիւնները միայն կրնան կատարածները յիշել այս կնճառ տըրեւրոյ նկատմամբ։ Կ. Պոլսոյ գեւապա նախորհուրդն իսկ որոշած էր որ այս երկիրները չեն կրնար զարգանալ առանց Սև ծովու վրայ նաւահանգիստ ունենալու։ Իսկ Եզեական ծովու կողման գալով, Ռուսիոյ նպատակն էր Պուլաւիոյ առեւտրական բարգաւաճութիւնն, յորմէ Միջերկրականի մէջ վաճառականութիւն ունեցող տէրութիւնը ամենէն աւելի պիտի շահին։

Ահա ինչպէս կը տեսնուի՝ այս կէտին վրայ կորչաբողի իշխանը մեղմ միւ կանցնէր, թողով որ խառն յանձնաժողով մը ընէ և որոշէ տեղական ժողովրդոց մեծամասնութիւնը։ Հի-

մայ կը սուր թէ Ռուսիա կը հաւանի որ այս յանձնաժողովը փոխանակ Ռուս և Օսմանցի պաշտօնատարներէ կազմուելու՝ մեծ տէրութեանց կողմէն կազմուի, և քանի որ մեծամասնութեան սկզբունքը կը ընդունի, խնդիրը կիսով չափ լուծուած կընայ համար։ Ինչ-Յանձնաժողովը կը ընէ, և ըստ այս սկզբունքի Պուլաւիոյ մեծամասնութիւն չունեցած նախագահները չեն կրնար Պուլաւիոյ մէջ մտնել։ Կը մընայ այսպիսի գաւառներու վարչութեան եղանակն որոշել, այն ալ տէրութեանց խորհրդին գործն է։ Թե ստացիլ և Եպիսոպոսի նկատմամբ կորչաբող իշխանը կը թէ գաղտնագրութեան մէջ յուսական գաւառաց բարենորոգումն ևս գրուած էր, որ պէս զի չըսուի թէ Ռուսիա միայն Սլավաց շահերը պաշտպանած է։ Բայց յիշեալ բարենորոգմանց վրայ Եւրոպական տէրութեանց հակելու իրաւունքը կը ճանչէր։

Եւրոպայի ուրիշ գլխաւոր մէկ առաւելութիւնը Պաթմի վրայ էր, և Վիեննայի մէջ կը սուր երբ թէ Պաթմի առաւել Ռուսիոյ ճանապարհ կը բացուի գէտ ի Միջագետք և ի Պարսից ծովածոց։ Բայց Պաթմի նկատմամբ կորչաբող իշխանն այսպէս կը գրէր. «Ռուսիոյ այսչափ ծախիւ և անհաշիւ մը պատերազմ մը ստացած ապահովութիւնն և վաճառականութեան յարմար նաւահանգիստը Պաթմին է միայն։ Հետեւաբար ձիւ տրուած բան մը չէ, և ինչ ներկայացուցած գրաւական տու գանքին փոխարինութիւն ըլլալէ խիստ հեռի է։» Այս պարբերութեան չէր կրնար հետեւիլ թէ Ռուսիա անպատճառ պիտի պահէ Պաթմին առեւել, այլ կրնար նաև անկէ հետեւել, որ և թէ Ռուսիոյ պահանջած գրաւական փոխարինութիւնը տրուի, կըրնայ Պաթմին ետ ձգել։ Ասոնք պարզապէս ինքնագրութիւններ կրնային ըլլալ, երբ առեւելն Բեդֆորդի արքունեաց ճիշդ կարծիքը չէր գիտցուեր։ Բայց հիմայ որ կը հաստատուի թէ զիջումներ ընելու տրամադրութիւն կը ցուցնէ վերոյիշեալ գլխաւոր կէտերուն նկատմամբ, կորչաբող իշխանին յիշատակագիրը միւսանգամ աչքէ անցունելով կրնայ հետեւել թէ Ռուսիոյ զիջումներն և խաղաղութեան պահպանութիւնը խիստ հաւանական են։

Բեդֆորդի կէտն կը գրեն թէ թէ պէտ Շուվալովի պաշտօնը գաղտնի կը պահուի, բայց ակումբներու մէջ Անգլիոյ և Ռուսիոյ մէջ համաձայնութեան կէտերուն վրայ վիճաբանութիւն ու խօսակցութիւն կը լլար։ Ռուսք կըսեն երբ թէ պատերազմին մեծ առաւելայնք քրիստոնէից աղատութիւնը (պէտք է հարցնել ո՞ր քրիստոնէն է)՝ ապահովեալ է, թէ հետեւա-

բար նոր Պուլաւիոյ աշխարհացոյց տախտակն անփոփոխ չէ, քանզի առաւելականեաց էր։ Միւսանգամայն պատերազմական տուգանաց համար որի վերաբերութիւնը անկարելի և անընդունելի չէին համարուեր։ Թէ և Կարսն անպատճառ պահել կուգար, բայց Պաթմի համար այնչափ գրաւական կերպիւ չէր խօսուեր, և շատերը գիտողութիւն կընէին թէ միւրիւններով բուսկի ծախք ընել պէտք է Պաթմին տրամադրուելու, նաւահանգիստը բարեւոքելու և ճանապարհները շինելու համար, որպէս զի նաւահանգիստը կարենայ կարեւորութիւն ստանալ։

Այս ամեն գիտողութիւններն ու խորհրդածութիւններն իսկ կը ցուցնեն որ Բեդֆորդի մէջ խաղաղական աղբացութիւնը կը տիրէ, և ինչպէս ասոր՝ կառավարութիւնը կը խօս և ուրիշ թերթերու փողոցներուն մէջ վաճառումն արդիւնք, վասն զի պատերազմաբար լեզու կը զործածէին։ Սլավ ամենայնիւ տակաւին թէ Ռուսիա և թէ Անգլիա իրենց պատերազմական ահալ պատրաստութիւնները գաղտնեցուցած չեն։ Ռուսիա Ամերիկայի մէջ նոր շողեւնաւ մ'ալ գնեց, զոր ուրիշ արդէն գնածներուն նման պիտի զինէ, հարկաւ Անգլիոյ գէտ գործածելու համար, եթէ պէտք ըլլայ։ Բայց Անգլիական թերթերը կըսեն թէ Ռուսաց ծովապատակները չեն կրնար Անգլիոյ մեծ վտանգ մ'ըլլալ թէ Ամերիկայի կառավարութիւնը վաշինկթընի գաղտնագրութեան համեմատ տարաւոր է գաղտնեք արդեւու, և թէ Անգլիոյ նաւատորմն ալ կրնայ զանոնք բռնել։

Անգլիոյ հնդկական զօրքը Մայթա հասնելու պիտի լինէ։ Խորհրդաբանին մէջ ընդգրկմանը մասին գլուխ Լորտ Հարիսի կողմէն հնդկական զօրաց Եւրոպայի մէջ գործածութիւնը պարտաւերաւ առաջարկ մը ներկայացուց, բայց խորհրդարանը 226 քուէի գէտ 347 քուէով մերժեց, և հետեւաբար Պիքսմիլիսի նախարարութիւնը վստահութեան քուէ ստացաւ։

Եւրոպական լրագրաց մէջ մեր աղբիւն վրայ հրատարակուած լուրք տեղեկութեանց և յոգնածոյ հետ մերթ ընդ մերթ անհետեւ լուրեր ալ կը հրատարակին, որոյ կարգէն կրնայ համարուիլ հետեւեալն, որ մայիս 7/19 թուով անգլիական Տէյլի-Նիւս լրագրին գրուած է Շիբայէն։

«Անգլիոյ աշխարհապարտութիւնն ոչ միայն Սլավները Ռուսիոյ թերթերուն մէջ կը ձգէ, այլ և Հայք ալ տեսնելով որ Անգլիոյ կողմէն ի նպատակ իրենց միջամտութեան մը հաւանականութիւն բնաւ չկայ, Ռուսիոյ կողմը գաղտնալու ամեն տրամադրութիւն չցոյց կուտան։ Դրան և Հայք Պատեր-

արքայադուստրին միջին յարաբերութիւնները կը դժուարանան : Գուռն իմացու որ հանգանակութիւն հաւաքելու պատրուակու Բեզ լրացուի և Պէրլին գնացող Հայ պատուիրակներն ամեն շանք 'ի գործ կը դնեն որպէս զի իրենց ինքնօրինակութիւն չնորհեալ համալսելու զիւրապատ խորէն արքայադուստրին Մոսկուայի համալսարանէն անմասնագործող հետ յարաբերութեան մտած է : որոց հետ միացած կերէի Ռուսոս—Հայկական քաղաքացիութիւն մ'ընելու համար : այս գաղափարաւ թէ Հայք չպիտի կըրնան իւրապայէն բան մը ձեռք բերել : և թէ իրենց միակ յոյսը Ռուսիոյ վրայ է : Ռուս և Հայ լեզուներով յայտարարութիւններ ծառայեցան : որք Հայոց կրամ առաւարտները կընըկարագրեն և Հայերն յայտարարութիւն կը գրգռեն :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննա 28 մայիս.
Լոնտրայէն ու Բեզրայուրկէն եկած լուրերն համաձայն են այս իրողութեան վրայ թէ Ռուսիա մեծ զինուորներ ըրած է : Եւրոպոյ կողմին բերած առաջարկութիւններէն կը հասկցուի թէ Ռուսիա կընտանի Անգլիոյ հետ համաձայնութեամբ Պուլտարիոյ սահմաններն որոշել : Պուլտարիա երկու ինքնօրէն նահանգի պիտի բաժնուի : Թուրքիոյ վճարելիք դրամական տուգանքը կ'ստի իջեր : Կայսրը Պուլտարիան ետ առնուալ վրայ չպիտի գնէ :

Լոնտրա 28 մայիս.
Եւրոպոյ կողմին բերած առաջարկութիւնները նախարարաց խորհրդին մէջ քննուելով ըստ սկզբան ընդունելի դատուեցան :

Պատերազմական պատրաստութիւնք դադար առին :

Բեզրայուրկ 28 մայիս.
Կորչաքոֆ իշխանին վիճակն որ բարւաքած էր, նորէն գէշացաւ երկուշաբթի կերպի :

Լոնտրա 28 մայիս.
Նախարարաց ժողովը երէկ երեք ժամ խորհուրդ բրաւ : այսօր նորէն պիտի գումարի :

Սթանտարտ լրագիրը կըսէ թէ խաղաղութեան երկուշաբթի պայծառ են : Զարը Պուլտարիոյ խնդրոյն վրայ անյող դողդէ : բայց Պուլտարիոյ սահմաններուն վրայ մեծամեծ զինուորներ կընէ : Զարմանալի չէ, կը յարէ յիշեալ թերթին, որ Ռուսիա պատերազմական տուգանքն ալ կ'ստի կամ աւելի վար իջնէ :

Վիեննա 28 մայիս.
Պուլտարէն Գոնցարովի Բոլիբիք լրագիրն ուղղեալ հեռագիր մը Ռուսական զօրաց մեծ շարժումներ կը ծանուցանէ : որոցմէ կը կարծուի թէ Ռուսք Եւրոպոյն անպատճառ դրաւելու զիտաւորութիւն ունին :

Լոնտրա 28 մայիս.
Անգլիոյ ծովակալութիւնն հրաման զրկեց նաւարանները թէ հրահաւոր նաւերը զինուորներու փութակներով թուլցնեն :

Լոնտրա 28 մայիս.
Ռուսիոյ առաջարկութիւնները վերջնական նկատուելով Անգլիոյ որոշումը վճարական լուծում մը պիտի բերէ :

Վիեննա 28 մայիս.
Կառավարութեանց հետ յարաբերութիւն ունեցող եւրոպական լրագիրը կը հաստատեն թէ Անգլիա և Ռուսիա համաձայններ են : Վաղը լուր կ'ստացուի թէ Գերմանիա Տէրութեանց խորհրդոյ հրաւիրագրերն յուղարկեր է :

Փարիզ 28 մայիս.
Տէպա լրագիրը կը ծանուցանէ թէ Տէրութեանց խորհրդոյ գումարումն լուծին 11ին պիտի ըլլայ :

Լոնտրա 28 մայիս.
Ռուսիոյ և Անգլիոյ բանակցութիւններն համաձայնութեան յանգեցան : Գերմանիա՝ տէրութեանց հաւանութիւնն ստանալուն պէս, հաւանականաբար վաղը, տէրութեանց խորհուրդ պիտի հրաւիրէ :

Փարիզ 28 մայիս.
Տէպա լրագիրն հետեւեալ տեղեկութիւնը կը հրատարակէ .
« Եւրոպոյ կողմին պաշտօնը խիստ զոհացողիք արդիւնքի մը յանգեցաւ : Ռուսիա կը հաճի Այսթէֆանոսի դաշնադրութիւնը տէրութեանց խորհրդոյ սեղանին վրայ դնել : Ամեն տէրութիւնը հաւանութիւն տուին տէրութեանց խորհրդոյ, որուն առաջին նիստը յունիս 11ին պիտի ըլլայ 'ի Պէրլին : »

Փարիզ 27 մայիս.
Տէպա լրագիրը կը հաւատէ թէ տէրութեանց խորհրդոյ համար հրահանգներն երէկ Պէրլինէն զրկուեցան :
Այս արդիւնքը Եւրոպոյ կողմին և Գերմանիոյ դաշնադրութեանց կայսրութեան (որ այս միջոցին Լոնտրա կը գտնուի) ջանքն պարտէ :
Վիեննա 27 մայիս.
Տէրութեանց խորհրդոյ գումարումը վերջնականապէս ապահովեալ է :
Տէրութիւնը հաճեցան որ Աւստրիա Դանուբի մէջ Առաջադէտ դրաւ, որ պէս զի Դանուբի նաւարկութեան դէմ ելնելիք խորհրդ կարենայ արդեւոր :

Լոնտրա 27 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ Սըր Սթաֆօրտ Նորթփոլթ բանակցութեանց վրայ մանրամասն տեղեկութիւն տալ չուզեց, բայց յայտնեց թէ տէրութեանց խորհրդոյ գումարումն հաւանականութիւնը նիւթապէս բարւոքած է :
Լորտերուն ժողովին մէջ ալ Լորտ Սալիսբըրի նոյն յայտարարութիւնն ըրաւ :
Վիեննա 27 մայիս.
Հասարակութիւնը մեծ մտահոգութիւն ունի տէրութեանց խորհրդոյ քիչ օրէն գումարման վրայ, որոյ պաշտօնը պիտի ըլլայ նոր դաշնադրութիւն մը խաղաղութիւն և Այսթէֆանոսի դաշնադրութեանց տեղ :
Պէրլին 27 մայիս.
Պարսից Շահը վաղը մեր քաղաքը կ'ըստպատուի :

Բեզրայուրկ 27 մայիս.
Կորչաքոֆ իշխանին վիճակը բարւոքեցաւ :
Լոնտրա 27 մայիս
Օսմ. Գոն. 44 9/16
Փոլս. 4865 44 3/4
» 4869 44 1/2
» 1871 44
» 1872 20
» 1873 44 1/2
» Կղկալու. 65 3/4
Անգլ. Գոն. 97 1/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Թեմաթիս Թարանի նախորդ վերատեսուց Տամատ Մահմատ փաշան պատերազմական գործոց նախարար անուանեցաւ :

Դարձեալ կայսերական հրամանաւ՝
Մալաթիայի կառավարիչ Թիմուր փաշան Մէրտինի կառավարիչ անուանեցաւ :

Մէրտինի նախորդ կառավարիչ Պէհրամ փաշան Դարաշիւսար Շարքի կառավարիչ անուանեցաւ :

Դարաշիւսար Շարքի նախորդ կառավարիչ Կարաշիւս փաշան Մալաթիայի կառավարիչ անուանեցաւ :

Վեհ. Սուլթանը նախորդ սպարապետ իլդէթ փաշային, արքունեաց Միշիք Սայիտ փաշային և Բեզըրայուրկի դեպտան Շարքի փաշային առաջին կարգի Օսմանիէ պատուանշան շնորհեց :

Արքունի տուգարանաց վերատեսուց Նէճիպ փաշային ալ առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհեց :
Ն. Կ. վեհափառութիւնը Պէշիկ-թաշի ոստիկանութեան գլուխ Լիվա Հասան փաշային Զարաթին վերջին դէպքին մէջ մոտուցած ծառայութիւնները վարձատրելու համար առաջին կարգի Մէճիտիէ և երկրորդ կարգի Ռամանիէ պատուանշան շնորհեց անոր պարգևեց :

Նմանապէս Թաշ-Գըլլայի հրամանաւ՝

նախարար Մէհմետ փաշային երկրորդ կարգի Օսմանիէ պատուանշան և Պէշիկ-թաշի գանուսու զօրաց սպաներուն ալ զանազան կարգի պատուանշաններ շնորհեց : Զօրակալաց ալ մէկ մէկ հարկերնոց լիցիտարում :

Շարաթ և կիրակի օրերը նախարարաց ժողով գումարեցաւ երկուշաբթի պաշտար :

Զարաթին գործին վրայ քննութիւնը կը շարունակի : Շարաթ և կիրակի օրն ալ և ալ կարգէ և ատիճանէ բազմաթիւ անձինք քննուեցան, որք քիչ շատ կամակցութիւն ունեցած են այն գործին, կամ այնպէս կասկածուած :

Թուրք լրագիր մը կրսէ թէ այս անձինք պաշարման վիճակի օրինաց համեմատ պատերազմական տեսանի մ'առջեւ պիտի դատուին :

Բ. Դրան հրդեհին պատճառն ու ծագումը հասկցուելու համար բանտարկեալ սենեկապահներուն քննութիւնը կը շարունակի, և յոռածին նայելով կարեւոր գաղտնիքներ երեան երեւ սկսած են : Այս պատճառաւ յիշեալ սենեկապահներուն դուրսի հետ հաղորդակցութիւնն արգիւրուած է :

Դատական պաշտօնատան երկաթէ մեծ սնտուկն, որ հրդեհին հետ տեսաւ օրը վրաշարակներուն մէջէն հանուած էր, շարաթ օրը բացուելով տեսնուեցաւ որ մէջը գտնուած ոսկի դրամաց մեծ մասն հայեր էր, իսկ լիցիտարաց և ուրիշ արծեթ թղթի մէկ մասը միսիր դարձած էր, մէկ մասն ալ խառնած, բայց այս վերջիններուն վրայի թուահամարներն ու կարգաթիւները կրնան որոշուիլ :
Սոյն արժեքներուն գումարն 500 հազար լիւրայի կը հասնի :

Առաջին նախարարն հրաման ըրաւ որ աղտակալ թուղթերուն տուամարը շինուի, որպէս զի այրածներուն ալ որոնք ըլլալը կարենայ հասկըցուիլ :

Թէրեմանը Շարք անուն Թուրք լրագիրը կը ծանուցանէ թէ վեհ. Սուլթանին ճարտարապետ Վահմ. Սարգիս պէյին հարցուելով թէ Բ. Դրան այրած յարկերը քանի զրոյով կրնան շինուիլ, հաշիւ ըրեր է որ իւր առջի վիճակին մէջ դրուելու համար 22000 լիւրայ և չորս ամիս ժամանակ պէտք կըլլայ իսկ քարով ու երկաթով շինելու համար 92000 լիւրա և 2 1/2 տարի ալ ժամանակ :

Դատական նախարարութեան և Պետական խորհրդոյ պաշտօնատեղիները դեռ չեն սրուած :

Կրտսի թէ կառավարութիւնը ընդ և Գեմալի փաշաներուն ապարանները վարձեր է կամ պիտի վարձէ :

Երէկ իրիկուան Լէվընթէ Էրըլտի մէջ հետեւեալ կը կարգանք :

Բ. Դուռը՝ վեհ. Սուլթանին հրամանաւ՝ վարչական, դատական, երկրակաշիւ և զինուորական բարենորոգումաց վերաբերեալ կազմական նոր օրինաց ծրագրեր պատրաստած է : Սուլթանը չորս յանձնաժողով պիտի անուանէ բնիկ և օտարազգի երեւելիներէ կազմեալ, որպէս զի այն ծրագրերը գործադրելի օրինաց փոխարկեն մինչև մէկ տարի :

Առաջարկեալ գլխաւոր բարենորոգումներէն մին կը տրամադրէ որ դատաւար կառավարիչները, կառավարչաց օգնականներն և քաղաքապետութեան կամ թաղապետութեան գլուխները մեծամասնութիւն ունեցող ազգէն պիտի ըլլան : Թաղապետ

տական խորհուրդները Պիւճէ մը պիտի հաստատեն և հարկահաւաքները կարգեն : Տեղական օստիկանութիւնը դատաւին բնակիչներէն պիտի կազմուի նոր հիման վրայ : Ուսուցման աշխատութիւնը պիտի հրատարակուի : Դատական տեսանիքը պիտի վերահասարակին, և դատաւորք անփոփոխելի պիտի ըլլան : Ոչ-մահապատկանաց վերակաշիւներն իրարմոց հաւատարմ պիտի ընդունուի : Ամեն կառավարութիւն առաջին աստիճանի դատարան մը պիտի ունենայ, և Կ. Պոլսոյ մէջ վերաքննութեան և վճարման վճարման մէկ մէկ աստեան պիտի հաստատուի :

Ուրգակի և անուղղակի տրոց բաշխման և հաւաքման նոր եղանակներ պիտի սահմանուին, ինչպէս նաեւ տէրութեան պարտուց վճարման համար : Ամեն Օսմանեան հպատակ զինուորութեան պիտի ընդունուի : Վերջապէս Կ. Պոլսոյ մէջ մեծ աստեան մը պիտի կազմուի կառավարչաց և քաղաքապետական խորհրդոց միջև ծագած անհամաձայնութիւններն և ընդհանրապէս դատական վարչութեանց դէմ ծագած դաշնակցութիւնը քննելու համար :

Բեզրայուրկի Օսմանեան դեսպան Շարքի փաշան այսօր մայրաքաղաքէն պիտի մեկնի Օստանայի ճանքով :

Թղթագրամոց բարձման յանձնաժողովը կը ծանուցանէ թէ ալիւրի տրոց հասոյթը մինչև մայիս 13՝ շաբաթ՝ 6.955.455 զըլի հասած է :

Այս գիշեր ժամ երեքին միջոցները Թուրքաբուրի մօտ Շէհիլի Էմինի թաղը հրդեհ պատահելով, 40—45 կառու շէնք այրեցաւ, տուն և խանութ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
15 մայիս երկուշաբթի իրիկուն	44,40		
16 մայիս երեքշաբթի առաւուս			
բացուեցաւ	42,30		
ժամ 6 լն	13,6		
Բուլնի իրիկուն	Ֆր. 46		
Թղթագրամ	Լր. 276		
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵՂԹՈՑ			
Կ. Պոլս 15 մայիս			
Սոսիթի լեւոնտի բաժ. Անգլ. լր.	3,20		
» փոխանակութեան	2,10		
Կ. Պոլսոյ Պաշտպան	3,20		
Քրէտի լեւոնտ	2,25		
Քրէտի Օսթրո-Թուրք	—		
Փոս. 1863	Ֆր. 50		
» 1865	» 51		
» 1869	» 49		
» 1872	» 48		
» 1873	» 48		
Թրամուայ	Օսմ. լր.	1 15	

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կը լսենք թէ վարչութեան կրօնական և քաղաքական ժողովներն իրենց պաշտօնավարութեան պայմանադրութեան իրարմոց չեն ուղղեալ ևս իրենց պաշտօնը շարունակել, հետեւեալ Աղլային ժողովը գումարումը փութացնելու պէտք կը տեսնեն :

Յայտնի է որ Աղլային ժողովը գումարման այսքան յետաձգուելուն պատճառը ներկայ քաղաքական շրթութիւնը եղանակաւ բայց օգտութեամբ կը լսենք որ կացութիւնը բարւոքեալ վրայ է, ուստի մինչև քանի մ'օր կը յուսանք որ այլ ևս արգելք կամ պատճառ չմնալով, մեր Աղլային ժողովը ալ իւր սովորական գումարումը կ'սկսի, և վարչական կազմութիւնն և այլ խնդիրք կը տնօրինուին :

